

Տ. ԵԶՆԻԿ ԵՊԻՄԿՈՂՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ

ՊԱՏԱՐԱԳԻՆ

(30 մարտի 2002 թ.)

«Յանուն Տօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ. ամեն»:

«Այսօր երկնքում հրճվում են հրեշտակները, հրճվում են և փառաբանում Տեր Աստծուն, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հարության ավերելով»:

Այսօր մենք այս Սուրբ Տաճարի կամարների ներքո հրճվեցինք մեր կյանքում մի անգամ ևս, երբ Կրկնեց Քրիստոսի Հարության ավերիչը և երբ Հայր Սուրբը ընթերցեց Հարության ավերարանական հաղվածը:

Այսօր Քրիստոսի Հարության փոռն է, սիրելի հավաքացյալներ:

Սակայն մեզ համար, իբրև քրիստոնյաների, բավական չէ միայն Քրիստոսի Հարությունը փոռել, բավական չէ միայն Քրիստոսի Հարության հիշատակով ոգևորվել և գոբեալնդվել: Մենք, իբրև քրիստոնյաներ, պետք է գիտակցենք, որ այսօր նաև մեր հարության փոռն է, մեզանից յուրաքանչյուրի հոգևոր հարության փոռն:

Սուրբ Զարիկ է այսօր: **Զարիկը** թարգմանությունն է հրեական **պասխա** բառի, որը նույնությամբ պահպանվել է նաև հունարեն Ս. Գրքում, որ թարգմանաբար նշանակում է՝ «մաքի կողքով անցավ»: Մենք մյուսի մարտերում ենք Եգիպտոսը, երբ Աստված պատրաստվում էր Եգիպտոսի գերությունից ազատելու Իր ժողովրդին, և պարվիրեց, որ նրանք իրենց փոքրում գառ մորթեն և գառան արյունից խաչանք քսեն իրենց դռների վրա, որովհետև գիշերը Տիրոջ հրեշտակը պիտի գար և սպաներ բոլոր անդրանիկ գավակներին, սակայն արյան նշանով նա պիտի պահպաներ, նա պիտի երկարացներ կյանքը հրեա ժողովրդի անդրանիկների, և այսպիսով Զարիկի շնորհիվ հրեա ժողովրդի անդրանիկները փրկեցին իրենց կյանքը:

Այդ փրկությունը, սակայն, ժամանակավոր մի փրկություն ուներ: Քրիստոս Իր գալստյամբ, Իր խաչելությամբ Իր արյունը թափեց, Իր արյամբ դրոշմեց մեր բոլորի սրտերը, մարմերը և հոգիները, և Քրիստոսի արյունով մաքի մեր կողքով անցավ: Մեր մեջ ապրում էր առաջին մարդը, որ դրախտում անհնազանդ գրկվեց Աստծո առաջ և դարապարտվեց մահվան: Քրիստոսի խաչելությամբ և Քրիստոսի արյան շնորհիվ մենք հարություն առանք և արժանացանք հավիտենական կյանքին: Ահա թե ինչու, սիրելի հավաքացյալներ, ես ասացի, որ այսօր ոչ միայն Քրիստոսի Հարության փոռն է, այլև մեզանից ամեն մեկի հարության փոռն:

Յուրաքանչյուր կանայք, որոնք եկել էին Քրիստոսի գերեզման՝ օծելու Փրկչի մարմինը յուրով, կնդրուկով և անուշահոտ յուղերով, երբ ականատես եղան Քրիստոսի Հրա-

շափառ Հարությանը, շրապեցին առաքյալների մոտ՝ ավելորդ նրանց Քրիստոսի Հարության լուրը: Առաքյալները, կես շփոթված, կես զարմացած, կարծեք իրենց գլուխները կորցրած, սակայն ոչ երբեք հիասթափված, հավաքված մտածում էին, թե այս ինչ եղավ. իրենց Տերը՝ Վարդապետը, որ հարություն Կրեց Ղազարոսին և ուրիշ մարդկանց, որ բժշկություններ կատարեց, որ կարողացավ իրեն ենթարկել բնության փարոքերը՝ խաչվեց, մահացավ, թաղվեց և չկարողացավ իրեն օգնել:

Այսպիսի մտածումներ էին անցնում առաքյալների մտքով, սակայն նրանց հոգում հաստատ էր համոզումը, որ այդ բոլորը ժամանակավոր մի երևույթ էր, ինչպես Պեղորոս առաքյալն ասաց. «Տեր, ես մինչև վերջ պիտի գամ Քո երկից», սակայն նա չղիմացավ փորձությանը և երեք անգամ, նախքան աքաղաղի կանչելը, ուրացավ Քրիստոսին: Այդ նույն Պեղորոս առաքյալի մեջ կար անսասան հավատը Քրիստոսի նկատմամբ, և այդ հավատի վրա է, որ Քրիստոս Իր Եկեղեցին կառուցեց, ինչպես անապատում հրեաները, երբ մի պահ կասկածեցին Աստուծո հզորության վրա, երբ մի պահ կարծեք մոլորվեցին և ոսկե հորթ կանգնեցրեցին իբրև իրենց պաշտամունքի առարկա:

Աստված նրանց որպես պարիժ ուղարկեց օժերին, և այն ժամանակ Մովսեսը խորհրդանշաբար խաչի վրա կանգնեցրեց պղնձե օձը, որին նայելով փրկվեցին օձից բոլոր խայթվածները, այնպես էլ կանգնեցվեց Քրիստոսի խաչը, որպեսզի հեղափոխե մենք բոլորս՝ Քրիստոսին հավաքացող բոլոր հավաքացյալներս, ովքեր որ ինչ-ինչ պայմաններում երբևէ կարող ենք սասանվել, երբևէ կարող ենք շփոթվել, երբեք իրավունք չունենանք հիասթափվելու, որովհետև մենք ունենք Ս. Խաչը, որին նայելով պեղք է հիշենք Քրիստոսի թափած արյունը և այդ արյամբ նորից հարություն պիտի առնենք:

Միևեկի հավաքացյալ ժողովուրդ, անցավ Մեծ Պաեքի շրջանը, անցավ Ավագ Շաբաթը: Շաբաթը եկել եք այսօր եկեղեցի, որպեսզի Ս. Հաղորդություն առնեք, որպեսզի ճաշակեք Քրիստոսի արյունը և Քրիստոսի մարմինը: Ձեզանից ոմանք կարողացել են ամբողջ Մեծ Պաեքի ընթացքում պաս պահել, ոմանք ցանկացել են դա անել, սակայն ինչ-ինչ պարճառներով չի հաջողվել այդ անել, այլ պահել եք մեկ շաբաթ կամ մի քիչ ավելի, կամ մի քիչ պակաս: Ուրիշներ դարձյալ ցանկանալով պաս պահել, սակայն դարձյալ ինչ-ինչ պարճառներով չեն կարողացել այդ անել, սակայն այսօր ծոմ են պահել և եկել են եկեղեցի՝ խոստովանել, իրենց մեղքերը հայտնել Աստծուն՝ ցանկանալով հաղորդվել Քրիստոսի մարմնին և արյանը:

Այս պահին ես ցանկանում եմ հիշել Քրիստոսի առակներից մեկը, թե ինչպես մի գործարար դուրս եկավ առավոտյան և բանվորներ բերեց իր հողամասի վրա աշխատելու և նրանց խոստացավ, որ կվճարի մեկ օրվա համար մեկ մնաս: Երեք ժամ հետո նա գնաց, նորից բանվորներ բերեց: Նա նրանց նույնպես խոստացավ վճարել մեկ մնաս: Անցավ երեք ժամ, նորից բանվորներ բերեց՝ դարձյալ մեկական մնաս վճարելու պայմանով: Եվ երբ մնացել էր աշխատանքային օրվան մեկ ժամ, դարձյալ

բերեց բանվորների և այդ բոլորին հավասար մեկ մնաս վճարեց: Նույնն է պարագան այսօր ձեզ համար: Նրանք, ովքեր պահել են պասը բոլոր օրերին, լիիրավ արժանացել են Քրիստոսի մարմնի և արյան հաղորդմանը, նրանք, ովքեր պահել են շապր ավելի նվազ կամ ընդամենը մեկ օր ծառ են պահել, նրանք վատրակել են այն, ինչ որ վաստակել են, իսկ այն մյուսը, որ չեն վաստակել, այսօր Քրիստոս նվեր պիտի անի ձեզ: Այնպես որ, սիրելի հավատացյալներ, այսօր, երբ դուք հոգեպես հարություն եք առել, մի՛ վարանեք, և բոլորդ կմոտենաք մեր Տեր Հիսուս Քրիստոսի մարմնին և արյանը, որին փառք հավիտյանս հավիտենից, ամեն:

Քրիստոս հարյավ ի մեռելոց: